eurisco
Finding seeds for the future

Պատուհան դեպի Եվրոպայի բուսական բազմազանություն

Ապրիլ, 2009

Ազգային և միջազգային պարտավորությունների կատարումը.

Բույսերի գենետիկական ռեսուրսների (ԲԳՌ) եվրոպական տեղեկատվական համակարգի նկատմամբ պահանջարկը բավարարելու համար 2001թ. մշակվել են ԲԳՌ ազգային կատալոգներ և ստեղծվել է եվրոպական երկրներում պահպանվող բույսերի ex situ հավաքածուների որոնիչ կատալոգ՝ EURISCO-ն: Նմանատիպ համակարգի ստեղծման անհրաժեշտությունը սահմանված է Պարենի արտադրության և գյուղատնտեսության վարման համար բույսերի գենետիկական ռեսուրսների (ՊԳԲԳՌ) միջազգային դաշնագրում և ՊԳԲԳՌ-ի պահպանման և կայուն օգտագործման գործողությունների գլոբալ ծրագրում: EURISCO-ն նաև նպաստում է Կենսաբազմազանության մասին կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարմանը՝ կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման առումով, ինչպես նաև Համաեվրոպական կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ռազմավարության իրագործմանը: EURISCO-ն պաշտոնապես մեկնարկել է 2003 թ. սեպտեմբերին:

Ինչ է EURISCO-ն.

EURISCO-ն ինտերնետային կայքում տեղադրված կատալոգ է, որը տեղեկատվություն է տրամադրում Եվրոպական երկրների բույսերի ex situ հավաքածուների վերաբերյալ: Ներկայումս այն պարունակում է 38 երկրի 1450 ցեղի և 8650 տեսակի 1.1 միլիոնից ավելի նմուշների անձնագրային տվյալներ: Այդ նմուշները կազմում են Եվրոպայում պահպանվող ex situ հավաքածուների կեսից ավելին և ամբողջ աշխարհում գոյություն ունեցող հավաքածուների մոտ 19%-ը: Միջազգային չափորոշիչներին համապատասխանող EURISCO-ն բույսերի ex situ հավաքածուների վերաբերյալ տեղեկատվության մի ունիվերսալ շտեմարան է, որը մատչելի է դարձնում մշակաբույսերի, կերային, վայրի և մոլախոտային բույսերի, ավանդական սորտերի և սելեկցիոն գծերի մասին տվյալները: EURISCO-ն հնարավորություն է տալիս փնտրելու անհրաժեշտ տեղեկություններ՝ ըստ մշակաբույսի տեսակի, կարգաբանության, ծագման, աշխահագրության, նմուշների կարգավիճակի և այլ չափանիշների:

Ներկայիս կարիքը դիվերսիֆիկացված սննդամթերքի նկատմամբ պահանջում է մշակաբույսերի գենետիկական բազմազանության ավելի լայն կիրառում

Ինչպես է գործում EURISCO-ն և ովքեր են մասնակիցները.

EURISCO-ն, օգտագործելով և ընդլայնելով ազգային կատալոգների հնարավորությունները, ստեղծել է արագ մուտք գործելու համակարգ՝ ազգային կատալոգների տեղեկատվությունը մատչելի դարձնելու համար: Յուրաքանչյուր երկիր լիովին պատասխանատվություն է կրում և ինքնիշխան իրավունքներ ունի որոշում ընդունելու տվյալների առկայության, ճշտության և ծավալի վերաբերյալ: EURISCO-ի կոնտակտային անձինք աստիճանաբար մուտքագրում են ԲԳՌ-ի ազգային կատալոգների տվյալները՝ ընդլայնելով և բարելավելով միջազգային կատալոգը:

ECP/GR

Bioversity International

Գենբանկի նմուշները իրենցից ներկայացնում են սելեկցիայի, հետազոտության և ուսուցման համար իրական և պոտենցիալ արժեք ունեցող գենետիկական նյութի շտեմարան՝ նպաստելով պարենային ապահովությանը

EURISCO-ի դերը

EURISCO-ն մատչելի է դարձնում այն տեղեկատվությունը, որը օգտագործվում է ոչ միայն որոշում կայացնողների, այլ նաև գենբանկերի կառավարիչների, գիտնականների, սելեկցիոներների, ֆերմերների և լայն հասարակության կողմից՝ տրամադրելով եվրոպական երկրներում պահպանվող նմուշների մասին տեղեկություններ:

Հայացք դեպի ապագա

EURISCO-ի ստեղծման երկրորդ փուլում աջակցություն է տրամադրվելու ազգային կատալոգների ստեղծմանը, կոնտակտային անձանց ուսուցմանը և համակարգի գործառնական հնարավորությունների ընդլայնմանը՝ շարունակելով բալերավել առկա տեղեկատվության ճշտությունը և ավելացնելով ծավալը: Աշխատանքները նպատակաուղղվելու են եվրոպական տեղեկատվական համակարգի ստեղծմանը, որը ընդհանրացնելու է ex situ և in situ տեղեկատվությունը՝ մեկ գլոբալ ինտերնետային համակարգի միջոցով կապ ստեղծելով տեղեկատվական այլ աղբյուրների հետ:

Ապագան կառուցվում է բույսերի գենետիկական բազմազանության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման և ապագա սերունդների համար ԲԳՌ-ի կարևորության մասին իրազեկության բարձրացման միջոցով:

Ներկայումս նմանատիպ միջոցառումներ նախաձեռնվում են նաև այլ տարածաշրջաններում:

Ավանդական գիտելիքները և մշակութային բազմազանությունը նպաստում են մշակաբույսերի բազմազանության օգտագործմանը՝ տարբեր եղանակներով և նպատակներով

Լուսանկարներ՝ Է.Բետենկուրտ և Ս.Դիաս
Թարգմանություն՝ Ալվինա Ավագյան: Խմբագրում՝ Հերիքնազ Լեմբերյան

European Cooperative Programme
for Plant Genetic Resources (ECPGR)
Bioversity International
Via dei Tre Denari, 472/a
00057 Maccarese, Rome, Italy
Tel: (+39) 066118204
Fax: (+39) 0661979661
Email: eurisco@ecpgr.org
http://eurisco.ecpgr.org